ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 19.10.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/37

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի կողմից 11.10.2017թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/37 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 11.10.2017թ. բողոքով հայտնել է, որ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության կողմից ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության կարիքների համար վարչական շենքի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման

աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՊԳԿՎ-ԳՀԱՇՁԲ-2017/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի բացման և ամփոփման արդյունքում «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է հայտի ապահովման վճարման պահանջագրի «գումարը թվերով և տառերով» դաշտում նշված գումարը հրավերով սահմանված չափին չհամապատասխանելու հիմքով: Մինչդեռ հայտի ապահովման չափը գերազանցել է գնային առաջարկի հինգ տոկոսի չափը:

Ընկերությունը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 46-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր պնձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին.

2) դատական կարգով բողոքարկելու գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Ընկերությունը վկայակոչել է նաև Օրենքի 50-րդ հոդվածի 10-րդ մասը և 51-րդ հոդվածի 1-ին մասը:

Ընկերությունը բողոքով խնդրել է՝

1. Կասեցնել «ՊԳԿՎ-ԳՀԱՇՁԲ-2017/1» ծածկագրով ընթացակարգի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի կայացրած որևէ որոշման իրականացումը, այդ թվում նաև պայմանագրի կնքման գործընթացը՝ մինչև բողոքի վերաբերյալ վերջնական որոշման ընդունումը:

2. Չեղյալ համարել «ՊԳԿՎ-ԳՀԱՇՁԲ-2017/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի բացման արդյունքում «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտը մերժելու մասին որոշումը և այն համարել հրավերի պահանջներին համապատասխան:

3. Դադարեցնել «ՊԳԿՎ-ԳՀԱՇՁԲ-2017/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 05.10.2017թ. թիվ 3 արձանագրությամբ «Էմ Ջի Դիզայն» ՍՊԸ-ի հայտն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնահատելու մասին որոշումը:

«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 16.10.2017թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ Ընկերության կողմից գնային առաջարկի հինգ տոկոսը գերազանցող հայտի ապահովում ներկայացնելը հիմք չէ հայտը մերժելու համար, քանի որ Ընկերության կողմից փաստացի պահպանվել է գնային առաջարկի հինգ տոկոսի չափով հայտի ապահովում ներկայացնելու պահանջը:

2. <u>ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) Խորհրդին ուղղված 12.10.2017թ. թիվ 04/16.21/6364-17 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության կարիքների համար ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմի վարչական շենքի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՊԳԿՎ-ԳՀԱՇՁԲ-2017/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգ: Հայտերը բացվել են 27.09.2017թ. ժամը 10:00 էլեկտրոնային գնումների՝ armeps համակարգի միջոցով: Ընթացակարգի շրջանակներում հայտ է ներկայացրել 6 մասնակից, այդ թվում նաև «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն: «ՊԳԿՎ-ԳՀԱՇՁԲ-2017/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի 27.09.2017թ. կայացած հայտերի բացման նիստում գնահատող հանձնաժողովի թիվ 1 որոշմամբ, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ

հոդվածի 1-ին մասը (Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են) և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը (հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան), «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է, քանի որ հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև 5 տոկոսին:

Միևնույն ժամանակ «ՊԳԿՎ-ԳՀԱՇՁԲ-2017/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 7-րդ կետի 7.1-րդ ենթակետը սահմանում է, որ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի 5 տոկոսին:

«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի կողմից հայտի թիվ 8 հավելվածով ներկայացվել է հայտի ապահովում՝ տուժանքի մասին համաձայնագրի տեսքով, որի մաս կազմող վճարման պահանջագրի գումարը թվերով և բառերով դաշտում որպես հայտի ապահովման գումար՝ տուժանք, նշվել է 80000 (ութսուն հազար) ՀՀ դրամ: Մասնակցի կողմից ներկայացվել է գնային առաջարկ՝ 1312000 (մեկ միլիոն երեք հարյուր տասներկու հազար) ՀՀ դրամ: Ուստի «ՊԳԿՎ-ԳՀԱՇՁԲ-2017/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ընկերության կողմից ներկայացված հայտի ապահովման չափը (80000 (ութսուն հազար) ՀՀ դրամ) գերազանցում է գնային առաջարկի (1312000 (մեկ միլիոն երեք հարյուր տասներկու հազար) ՀՀ դրամ) հինգ տոկոսը (1312000*5%=65600):

Այսպիսով՝ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման չափը չի կազմում գնային առաջարկի հինգ տոկոսը, ինչի պահանջը

սահմանված է հրավերով, ուստի Ընկերության հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն հայտի ապահովումը ենթակա չէ շտկման՝ Ընկերության կողմից ներկայացված հայտը մերժվել է:

Միևնույն ժամանակ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի 3-րդ կետի առնչությամբ Պատվիրատուն նշել է, որ 05.10.2017 թվականի թիվ 3 արձանագրությամբ «Էմ Ջի դիզայն» ՍՊԸ-ի հայտը ոչ թե գնահատվել է հրավերի պահանջներին համապատասխան (նման որոշում կայացվել է 27.09.2017թ. թիվ 2 որոշմամբ), այլ Ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից և հաստատվել է ԳՀ ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

Վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն ներկայացրել է Ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 16.10.2017թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերը նշված դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2017/37 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2017/37 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության կարիքների համար ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմի վարչական շենքի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՊԳԿՎ-ԳՀԱՇՁԲ-2017/1» ծածկագրով ընթացակարգ, որին

մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

3. «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 1 312 000 ՀՀ դրամ:

4. Ընկերությունը հայտի թիվ 8 հավելվածով ներկայացրել է հայտի ապահովում, որի չափը կազմել է 80 000 ՀՀ դրամ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.09.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի 4.1 ենթակետով արձանագրվել է, որ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի հայտի ապահովման մաս կազմող վճարման պահանջագրի «գումարը թվերով և բառերով» դաշտում նշված գումարը գերազանցում է հրավերով սահմանված 5 տոկոսի չափը, ուստի նույն արձանագրության 7-րդ կետի 1-ին ենթակետով կայացված որոշմամբ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի 11.10.2017թ. բողոքը, ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության 12.10.2017թ. թիվ 04/16.21/6364-17 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, ***որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության կարիքների համար ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմի վարչական շենքի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՊԳԿՎ-ԳՀԱՇՁԲ-2017/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 7-րդ կետի 7.1 ենթակետով սահմանվել է, որ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ***հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին***:

Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած մասնակից «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի

ընդհանուր գինը կազմել է 1 312 000 ՀՀ դրամ: Միևնույն ժամանակ Ընկերությունը հայտի թիվ 8 հավելված տուժանքի մասին համաձայնագրին կից ներկայացրել է մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը, որի մեջ հայտի ապահովման գումարի չափը նշել է 80 000 ՀՀ դրամ:

Այսպես Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերության կողմից ներկայացված հայտի ապահովման չափը, որը նշվել է 80 000 ՀՀ դրամ, գերազանցում է Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի հինգ տոկոսը, քանի որ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի հինգ տոկոսը կազմում է ***65 600 ՀՀ դրամ, այլ ոչ թե 80 000 ՀՀ դրամ (1 312 000*5=65 600):*** Մինդեռ Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությունը սահմանում է, որ հայտի ***ապահովման չափը հավասար է հայտով առաջարկվող գնի <u>մինչև հինգ տոկոսին</u>***, իսկ Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.1-րդ ենթակետի համաձայն՝ ***հայտի ապահովման չափը <u>հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:</u>***

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետը սահմանում է, որ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Այսպիսով հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի կողմից «ՊԳԿՎ-ԳՀԱՇՁԲ-2017/1» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերով նախատեսված պայմաններին, քանի որ հայտի ապահովման վճարման պահանջագրում նշված հայտի ապահովման չափը գերազանցում է Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի հինգ տոկոսը: Ոստի Խորհուրդն արձանագրում է, որ մերժելով Ընկերության հայտը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, գործել է իրավաչափ:

Հետևաբար Խորհուրդը գտնում է, որ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 11.10.2017թ. ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 11.10.2017թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**